ԱՄԵՆ ՄԱՐԴ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ

Ընտանիքի Կարևորությունը

Մաս 3

1- Ընտանիքը ապաստան է փոթորիկներից պաշտպանվելու համար

«Տիրոջ երկյուղի մեջ ամուր ապահովություն կա, և նրա որդիների համար ապավեն պիտի լինի:» Առակաց 14:26

2- Ընտանիքը կրթարան է կյանք մտնելու համար

«Հայրեր, մի բարկացնեք ձեր որդկանցը. այլ մեծացրեք նրանց խրատով և Տիրոջ ուսմունքովը:» Եփեսացիս 6:4

- Փոխհարաբերություն

«Եվ Հիսուսը զարգանում էր իմաստությունով և հասակով, և շնորհքով՝ Աստծո և մարդկանց մոտ:» Ղուկաս 2:52

- Արժեքներ

«Եվ այս խոսքերը...կրկնիր նրանք քո որդկանցը, խոսիր նրանց վրա քո տան մեջ նստած ժամանակդ և ճանապարհ գնացած ժամանակդ, և պառկելիս և վերկանալիս:» Երկրորդ Օրինաց 6:6-7

- Բնավորություն

«Նա ինձ սովորեցնում էր և ասում ինձ. Թող քո սիրտը բռնի իմ խոսքերը, պահիր իմ պատվիրանները և կապրես: Իմաստություն ստացիր, հանճար ստացիր.» Առակաց 4:4-5

- Աստծուն ճանաչել

«Հայրը որդկանցը պիտի իմացնի քո ճշմարտությունը:»
Եսայիա 38:19

3- Ընտանիքը ծառայության սկզբնակետն է

«...գիտեք Ստեփանի տունը, որ Աքայեցիների առաջի պտուղն է, և իրանց անձերը սուրբերի ծառայության նվիրեցին:»
Ա Կորնթացիս 16:15

«.Ընտրե՛ք այսօր, թե ո՛ւմ եք ծառայելու…Բայց ես և իմ տունը Տիրոջն ենք ծառայելու»: Հեսու 24:15

Մեր Պարտականությունները ընտանիք չունեցողի նկատմամբ

1- Աստված մեծապես մտահոգված է որբերի վիճակով

«Մի շարժիր տեղիցը վաղեմի սահմանանշանները, և որբի արտերի մեջը մի մտիր: Որովհետև նրանց վրեժխնդիրը զորավոր է. Նա կ'վարի նրանց դատը քեզ հետ:» Առակաց 23:10-11

«Սուրբ և անարատ կրոնասիրությունն Աստծո և Հոր առաջին սա է, որբերին և այրիներին այցելել նրանց նեղության մեջ, և իր անձն աշխարհքից անարատ պահել:» Հակոբոս 1:27

«Եվ Ղեվտացին՝ որ քեզ հետ բաժին և ժառանգություն չունի, և քո դռներումն եղող օտարականը, որբը և որբեվայրին գան և ուտեն կշտանան. որպեսզի քո Եհովա Աստվածը քեզ օրհնի քո ձեռքի արած ամեն գործքերի մեջ:» Երկրորդ Օրինաց 14:29

2- Ինչ որ մեր երկնավոր Հայրը անում է մեր համար, մենք էլ նույնը անենք անհայր երեխաների համար

- Նա որդեգրում է մեզ

«Մեզ առաջուց սահմանելով, որ իրան որդեգիր լինենք Հիսուս Քրիստոսի ձեռովն՝ իր կամքի հաճության պես.» Եփեսացիս 1:5

- Նա կիսվում է մեր հետ

«Աստված ուղարկեց իր Որդին՝ որ օրենքի տակ լինողներին փրկի, որ որդեգրությունն ընդունենք...Աստված իր Որդու Հոգին ուղարկեց ձեր սրտերի մեջ, որ աղաղակում է Աբբա Հայր: Ուրեմն այլևս ծառա չես՝ այլ որդի. և եթե որդի՝ Աստծո ժառանգ էլ Քրիստոսով:»
Գաղատացիս 4:5-7

«Որբերի Հայր և որբեվայրիների դատավոր է Աստված իր սրբության տեղումը: Աստված մինակներին բնակեցնում է տան մեջ.»
Սաղմոս 68:5-6

Ես ի՞նչ կարող եմ անել

Հաջորդ Կիրակի

ԵՐԵՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հովիվ Սարօ Խաչիկեան